ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/89

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ «Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ

Կ. Գրիգորյանի (լիազորագիր տրված՝ 12.04.2020թ.),

«Գալիմա» ՍՊԸ-ի տնօրեն

Դ. Հովհաննիսյանի (պետական գրանցման համար՝ 273.110.1085248),

«Գալիմա» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ

Հ. Ղազարյանի (լիազորագիր տրված՝ 27.04.2020թ.),

Հ. Քոյլոյանի (լիազորագիր տրված՝ 27.04.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.04.2020թ. թիվ 26/26-1/5670-2020 գրությամբ «Գալիմա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 13.04.2020թ. թիվ 108 գրության հիման վրա, 16.04.2020թ. թիվ 26/26-1/5670-2020 գրությամբ նախաձեռնել է «Գալիմա» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Գալիմա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Գալիմա» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի պահանջը «Գալիմա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ հիմնավորված չէ հետևյալ պատճառաբանություններով.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ (հետայսու նաև՝ Օրենք) գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնկացելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտվել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակացությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը հաստատելու մասին 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող

հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնկացի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են՝ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներ ցուցակում:

Սույն դեպքում «Երևանի N 1տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ը՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցների ցուցակում ներառելու փաստական և իրավական հիմքերը մատնանշել է ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Կ. Բրուտյանի 07.04.2020 թվականին հասցեագրված գրությամբ, ըստ որի կողմերի միջև առկա պայմանագրի միակողմանի լուծման փաստական հիմքերն են նշվել հետևյալ ենթադրյալ խախտումները.

- «Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից Ընկերությանը 11.03.2020 թվականին ներկայացված գնման հայտով ապրանքները սահմանված ժամկետում չեն մատակարարվել,
- 20.03.2020 թվականի գրությամբ «Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ը մինչև 26.03.2020 թվականը Ընկերության համար սահմանել է ապրանքների և փաստաթղթերի թերությունների վերացման ժամկետ, սակայն մինչ պայմանագրի լուծման օրը Ընկերությունը չի մատակարարել 11.03.2020 թվականին ներկայացված գնման հայտով պահանջված ապրանքները՝ հավի միսը, պանիրը, հյութ մրգերի և անհրաժեշտ փաստաթղթերը,

- 25.03.2020 թվականին Ընկերության կողմից մատակարարված ապրանքը չի համապատասխանում տեխնիկական բնութագրով սահմանված կարագի բնութագրին և անվանմանը, համաձայն՝ «ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ-ի կողմից 02.04.2020 թվականին տրված փորձագիտական եզրակացության:

Իսկ որպես իրավական հիմքեր մատնանշվել են «Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման թիվ ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/3-Ս-ՏԻ-5-Գ պայմանագրի 2.1.7 կետի և 2.1.7.1 ենթակետի բ) 2.1.7 կետի և 2.1.7.1 ենթակետի բ) պարբերության դրույթները:

Հաշվի առնելով վերոգրյալը գտնում եմ, որ սույն գործով պարզաբանման են ենթակա հետևյալ հարցադրումները.

- Արդյո՞ք Ընկերության կողմից խախտվել են Կազմակերպության 11.03.2020 թվականին ներկայացված գնման հայտով ապրանքների մատակարարման ժամկետները և քանի օրով և արդյո՞ք ապրանքները եղել են 60 տոկոսից պիտանելիության ժամկետից պակաս, և արդյո՞ք Ընկերությունը չի ունեցել ապրանքների որակի սերտիֆիկատ:
- Արդյո՞ք Ընկերության կողմից սույն ընթացակարգի շրջանակում Ընկերությունը ծանուցվել է 11.03.2020 թվականին ներկայացված գնման հայտով ապրանքների մատակարարման ժամկետների խախտման վերաբերյալ, թե՝ ոչ:
- Արդյո՞ք Կազմակերպության կողմից 25.03.2020 թվականին մատակարարված ապրանքն է ներկայացվել փորձաքննության, թե՞ ոչ: Եվ եթե ոչ, ապա նման պարագայում կարող է արդյո՞ք «ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ-ի կողմից 02.04.2020 թվականին տրված փորձագիտական եզրակացությունը համարվել պատշաճ ապացույց:

Պատասխանելով սույն գործով պարզաբանման ենթակա առաջին հարցադրմանը՝ նշեմ, որ Պայմանագրում փոփոխություն կատարելու 10.01.2020 թվականի N 1 համաձայնագրի 1.3. կետի համաձայն կողմերը որոշել են Պայմանագրի Հավելված 1-ի գնման ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն՝ Հավելված 1-ի: Իսկ ինչ է նշվում Հավելված 1-ով ապրանքների մատակարարման ժամկետների վերաբերյալ՝ ոչինչ, բառիս բուն իմաստով ոչինչ, քանզի առկա չեն սահմանված ժամկետներ: Հաշվի առնելով նշվածը նախ պետք է արձանագրել թե Ընկերությունը երբ պետք է մատակարարեր Կազմակերպության կողմից 11.03.2020 թվականին գնման հայտով պահանջված ապրանքները, որից հետո նոր միայն հնարավոր կլինի արձանագրել Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերության խախտումը, քանզի ըստ նշված կետի

Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավել: Իսկ սույն դեպքում չունենալով ապրանքների մատակարարման ժամկետ չենք կարող արձանագրել նաև նշված կետի խախտումը: Ավելին ի հիմնավորումն այն փաստարկի, որ Ընկերության կողմից Կազմակերպության 11.03.2020 թվականի գնման հայտով ապրանքների խախտումը մտացածին է, ապացուցվում է նաև հենց նույն գնման հայտով, քանզի ըստ Կազմակերպության այդ օրվա գնման հայտով Ընկերության կողմից չի մատակարարվել մրգերի հյութը, սակայն գնման հայտում մրգերի հյութի պահանջ առկա չէ: Իսկ մրգերի հյութի պահանջ եղել է ավելի վաղ, օրինակ՝ 25.02.2020 թվականին, ուստի ակնհայտ է 11.03.2020 թվականի ապրանքների մատակարարման ժամկետների խախտման ենթադրյալ փաստարկի անհիմն լինելը, որը լրացուցիչ կապացուցվի նաև երկրորդ հարցադրման հակափաստարկներում: Ուստի, պատասխանելով սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող առաջին հարցադրմանը, գտնում եմ, որ Պայմանագրով ապրաքների մատակարարման ժամկետներ սահմանված չեն, ուստի դրանց մատակարարման ժամկետի խախտում առկա չէ, դրանից բխելով առկա չէ Պայմանագրի էական պայմանի խախտում և Պայմանագրի լուծման հիմքեր: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ 20.03.2020 թվականի ծանուցմամբ Կազմակերպությունը ընդունում է այն փաստը, որ ապրանքները մատակարարվել են սակայն ետ են վերադարձվել որակի սերտիֆիկատի բացակայության հիմքով, նման պարագայում ժամկետներում մատակարարման խնդիր չունենք ավելին ապրանքը ետ չի վերադարձվել, իսկ եթե առկա չէր որակի սերտիֆիկատ ապա պետք է Պայմանագրի խախտման հիմք ընդունեին ապրանքի որակի սերտիֆիկատի բացակայությունը, այլ ոչ թե ժամկետի խախտումը, և ի վերջո Պայմանագրի միակողմանի լուծման հիմքում արդեն իսկ չի դրվել այն փաստը, որ թխվածքը մատակարարվել է 60 տոկոս պիտանելության ժամկետից պակաս, իսկ եթե 13.03.2020 թվականին այդ նույն թխվածքը Կազմակերպությունը չի ընդունել, և իր իսկ գրությամբ մինչ Պայմանագրի լուծումը թերի մատակարարված ապրանքները չի մատակարարել, ապա այդ փաստը ինչու չի դրվել Պայմանագրի լուծման հիմքում: Նշվածից ակնհայտ է, որ իրականում ապրանքները ընդունել է և իրական վեճը եղել է որակի սերտիֆիկատը հայերեն ներկայացնելու մեջ, քանզի այն ռուսալեզու էր, իսկ ապրանքի ստանդարտները սույն դեպքում մաքսային միության կանոններին համապատասխան են կարգավորվում: Նշված հանգամանքը

նույնպես ապացուցում է այն փաստը, որ ապրանքների ժամկետների խախտումը մտացածին փաստարկ է:

Անդրադառնալով երկրորդ հարցադրմանը՝ հայտնում եմ, որ մինչև 20.03.2020 թվականը Կազմակերպությունը ևս մեկ՝ պայմանագրային դրույթների ենթադրյալ խախտման մասին ծանուցում է ուղարկել Ընկերությանը 17.03.2020 թվականին, ըստ որոնց ոչ թե նշվել է 11.03.2020 թվականի ապրանքների մատակարարման ժամկետների խախտման մասին, այլ՝ 13.03.2020 թվականի գնման հայտով պահանջված ապրանքների մատակարարման ժամկետների խախտման մասին, ի դեպ նույն ապրանքների, որոնք մատնանշվել էին նաև 11.03.2020 թվականի գնման հայտի չկատարման վերաբերյալ, այն դեպքում երբ նման ապրանքներ 11.03.2020 թվականի գնման հայտով չէր պահանջվել: Բնականաբար Կազմակերպության ոչ իրավաչափ գործողությունները և պահանջները Ընկերության կողմից չպետք է կատարվեին, ավելի առկա ապացույցով փաստվում է Ընկերության 13.03.2020 թվականի գնման հայտով պահանջված ապրանքների պատշաճ մատակարարումը: Ուստի ակնհայտ է, որ Ընկերությունը 11.03.2020 թվականի գնման հայտով ենթադրյալ ոչ պատշաճ մատակարարման վերաբերյալ չի ծանուցվել, ավելին դա մտացածին փաստարկ է:

Նշվածից զատ հատկանշական է այն, որ Պայմանագրի 2.2.4. կետի համաձայն՝ ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

Պայմանագրի նշված կետերից բխում է, որ մատակարարված ապրանքների քանակի և այլ թերությունների մասին գնորդը վաճառողին պետք է տեղեկացնի անմիջապես, այսինքն՝ պատասխանատու ստորաբաժանումը ընդունելով ապրանքները, եթե հայտնաբերել էր խախտում, ապա ինչու անմիջապես չի ծանուցել վաճառողին, այլ միայն 17.03.2020 թվականին, այսինքն՝ 6 օր անց, որը սննդամթերքի համար ողջամիտ ժամկետ չէ՝ կախված ինչպես սպառման ժամկետներից, այնպես էլ պահանջված քանակներից և գնման հայտերի պարբերականությունից:

Անդրադառնալով սույն գործով պարզաբանման ենթակա երրորդ հարցադրմանը՝ հայտնում եմ, որ Ընկերության կողմից 25.03.2020 թվականին մատակարարված ապրանքներից կարագը փորձաքննության ներկայացնելը կրել է ձևական բնույթ, քանզի

այն համապատասխանել է Պայմանագրի տեխնիկական բնութագրին: «ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ-ի կողմից 02.04.2020 թվականին տրված փորձագիտական եզրակացությունը ակնհայտ չէ, թե՞ ինչ կերպ է կատարվել նմուշառումը և արդյո՞ք այն հենց Ընկերության կողմից մատակարարված կարագից է արվել: Նման իրավիրճակի համար Օրենսդիրը սահմանել է հատուկ կարգ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 490-րդ հոդվածի համաձայն՝

Ապրանքի որակի ստուգում կարող է նախատեսվել օրենքով, այլ իրավական ակտերով, պետական ստանդարտների պարտադիր պահանջներով կամ առուվաճառքի պայմանագրով:

Եթե ստուգման կարգը սահմանված է օրենքով, այլ իրավական ակտերով, պետական ստանդարտների պարտադիր պահանջներով, ապա պայմանագրով նախատեսված ապրանքների որակի ստուգման կարգը պետք է համապատասխանի այդ պահանջներին:

Եթե ապրանքի որակի ստուգման կարգը սահմանված չէ սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան, ապա ապրանքի որակի ստուգումը կատարվում է գործարար շրջանառության սովորույթներին կամ առուվաճառքի պայմանագրով հանձնելու ենթակա ապրանքի ստուգման համար սովորաբար կիրառվող այլ կանոններին համապատասխան:

Սույն իրավական նորմի վերլուծությունից ակնհայտ է, որ Օրենսդիրը հստակ սահմանել է պայմանագրով նախատեսված ապրանքի որակի ստուգման կարագի պարտադիր համապատասխանություն՝ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգին, եթե դրանք առկա են, իսկ եթե ոչ, ապա ապրանքի որակի ստուգումը պետք է իրականացվի գործարար սովորույթներին համապատասխան կամ ապրանքի ստուգման համար սովորաբար կիրառվող այլ կանոններին համապատասխան:

ՀՀ կառավարության 19.04.2007 թվականի թիվ 598-Ն որոշմամբ հաստատված սննդամթերքի և սննդային հավելումների փորձաքննության նմուշառման կարգի 6-րդ կետի համաձայն՝ նմուշառման տարրաները և դրանց կափարիչները, ինչպես նաև կապարակնքման նպատակով օգտագործվող փաթեթավորող նյութերը պետք է պատրաստված լինեն պահման ու փոխադրման ժամանակ նմուշները փոփոխություններից պաշտպանող նյութերից, որոնք կարող են ազդել հետազոտությունների արդյուքների վրա: Դրանք պետք է պատրաստված լինեն սննդամթերքի հետ շփման համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով թույլատրված է նյութերից: Նույն կարգի 7-րդ կետի համաձայն՝ ընտրանքի ծավալը կազմող յուրաքանչյուր նմուշին տրվում է ծածկագիր, որը փակցվում կամ կցվում է նմուշին, իսկ նմուշները կապարակնքվում կամ դրոշմակնքվում են: Նույն կարգի 8-րդ կետի համաձայն՝ փորձաքննության համար նմուշառումը, նմուշների ծածկագրումը, կապարակնքումը կամ դրոշմակնքումը և նմուշառման ակտի ձևակերպումն իրականացնում է պետական վերահսկողության մարմնի տեսուչը՝ սննդամթերքի և սննդային հավելումների արտադրության ու շրջանառության փուլերում գործառնություններ իրականացնող և ծառայություններ մատուցող՝ տնտեսավարող սուբյեկտի լիազոր ներկայացուցչի մասնակցությամբ: Նույն կարգի 10-րդ կետի համաձայն՝ սննդամթերքի կամ սննդային հավելումների նմուշները պետք է պահել և փոխադրել կոնկրետ սննդամթերքի կամ սննդային հավելումների տեխնիկական կանոնակարգերով, այլ իրավական ակտերով կամ ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով նախատեսված պայմաններում: Նույն կարգի 11-րդ կետի համաձայն՝ սննդամթերքի կամ սննդային հավելումների նմուշառումը, պահումը և փոխադրումը ճիշտ կատարելու համար պատասխանատու է նմուշառող պետական վերահսկողության մարմնի տեսուչը:

Սույն իրավական ակտի կանոնները, որպես համանման կանոններ կիրառելով Պայմանագրով նախատեսված փորձաքննության համար, որպես կիրառելի կանոններ գտնում եմ, որ Կազմակերպության կողմից չեն պահպանվել սահմանված կանոնները, որ կրում էր դրանց պահպանման պատասխանատվություն, ավելին Ընկերության ներկայացուցչի մասնակցությամբ չի կատարվել մատակարարված կարագ փորձաքննության ներկայացնելու նմուշառումը, այն համապատասխան տարրաներով տեղափոխելու, դրոշմակնքելու և կապարակնքելու, ինչպես նաև այլ պահանջների կատարման վերաբերյալ ապացույցներ առկա չեն սույն գործում: Ավելին՝ «ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ կողմից 02.04.2020 թվականին տրված փորձագիտական եզրակացության վերջին նախադասությունում նշված է, որ լաբորատորիան պատասխանատվություն կրում է միայն փորձարկման ներկայացված նմուշի համար: Այսինքն՝ նույն նախադասությունից նույնպես չի կարելի փաստել թե կոնկրետ ինչ նմուշառում է ներկայացվել փորձաքննության: Փորձաքննության ներկայացվող ապրանքի նմուշառությանը վերաբերող կանոնները ինքնանպատակ չեն, դրանք ուղղված են երկկողմ շահերի պաշտպանությանը, ինչպես նաև փորձարկման ներկայացվող նմուշի անհատականացման պայմանների պահպանմանը, արդյունքում որպես ապացույց դրանց

կիրառելիության հնարավորության համար: Ուստի, սույն դեպքում առկա չէ ապացույց այն մասին, որ «ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ-ի կողմից 02.04.2020 թվականին տրված փորձագիտական եզրակացության համար ներկայացված նմուշը Ընկերության կողմից Պայմանագրի շրջանակում մատակարարված կարագից է, ապա այն չի կարող դիտարկվել որպես պատշաճ և վերաբերելի ապացույց: Պատասխանելով սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող երրորդ հարցադրմանը, գտնում եմ, որ ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ կողմից 02.04.2020 թվականին տրված փորձագիտական եզրակացությամբ չի փաստվում, որ որպես նմուշ փորձարկման է ներկայացվել Պայմանագրի շրջանակում Ընկերության կողմից 25.03.2020 թվականին մատակարարված կարագը և նշված եզրակացությունը սույն գործով վերաբերելի ապացույց չէ:

Ամփոփելով նշեմ, որ սույն գործով բացակայում է Ընկերության կողմից պայմանագրով նախատեսված որևէ դրույթի խախտում, օրինակ՝ ապրանքի մատակարարման ժամկետի խախտում, ապրանքի որակի խախտման վերաբերյալ ապացույցներ, ուստի, Կազմակերպության վկայակոչած պայմանագիրը միակողմանի լուծելու ծանուցման իրավական հիմքեր առկա չեն, իսկ մատնանշվածները վերաբերում են պայմանագրի լուծման հիմքերին և Պայմանագրի էական խախտման հասկացությանը, բայց Պայմանագրի որևէ կետի խախտման վերաբերյալ իրավական հիմքեր մատնանշված չեն: Ուստի, եթե բացակայում է Պայմանագրով նախատեսված որևէ դրույթի խախտման փաստ, ապա պայմանագիրը միակողմանի լուծելը ոչ իրավաչափ է, ուստի Պայմանագրի խախտման բացակայության հիմքով առկա չէ նաև Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր:

Պայմանավորված վերոգրյալով՝ խնդրում եմ մերժել «Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի՝ «Գալիմա» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ պահանջը»:

Ընկերությունը, ի լրումն ներկայացված դիրքորոշման, գրություններով հայտնել է հետևյալը.

«Ի լրումն թիվ ՍՑ-ՆԳ-2020/89 ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված դիրքորոշման հայտնում եմ, որ գործի քննության նիստի ժամանակ տրվել էր տեղեկատվություն այն մասին, որ ապրանքների որակի վերաբերյալ փաստաթղթերը Կազմակերպությանը ուղարկվել էին էլեկտրոնային փոստի միջոցով և

Կազմակերպության այն հիմնավորումն ու պնդումները, որ մատակարարվող ապրանքների որակի վերաբերյալ փաստաթղթերը չեն ներկայացվել անհիմն են:

Կից ներկայացնում եմ էլեկտրոնային փոստի էջերի արտատպված պատճենները, որտեղից ակնհայտ է ուղարկված կից փաստաթղթերի առկայությունը, որոնք ուղարկվել են դեռևս 06.03.2020 թվականին: Ինչպես նաև էլեկտրոնային փոխանցման եղանակով գնումների հետ կապված բողոքներ քննող անձին են փոխանցվում էլեկտրոնային փոստի 06.03.2020 թվականի հաղորդագրությունները՝ ուսումնասիրման նպատակով: Կցվում են նաև ապրանքի որակի վերաբերյալ փաստաթղթերի պատճենները: Դիրքորոշման օրինակը գործին մասնակցող կողմերին ուղարկելու փաստը հաստատող ապացույցներ:

Ի լրումն թիվ ՍՑ-ՆԳ-2020/89 ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված դիրքորոշման և ի պատասխան պատվիրատու կազմակերության 05.05.2020 թվականի գրության հայտնում եմ, որ անհրաժեշտություն է առաջացել անդրադառնալու որոշ էական շեշտադրումների.

Պատվիրատու կազմակերպությունը հայտնել է, որ Ընկերության առաքիչը 17.03.2020 թվականին մատակարարել է ապրանքը առանց սանիտարական գրքույկի: Հայտնում եմ, որ Պատվիրատու կազմակերպությունը արդեն իսկ թույլ է տալիս իրավունքի չարաշահում և սույն գործի շրջանակում իրավունք ունենալով ներկայացնել դիրքորոշումներ, արդեն իսկ սկսել է դրանք ներկայացնել խեղաթյուրված և կարծես առաջնորդվում է Ընկերությանը ամեն կերպ վարկաբեկելու սկզբունքով: Նախ հայտնեմ, որ Պատվիրատու կազմակերպությունը որևէ ապացույց չի ներկայացրել այն մասին, որ Ընկերության առաքիչը 17.03.2020 թվականին մատակարարել է ապրանքը առանց սանիտարական գրքույկի, երկրորդ՝ 17.03.2020, 20.03.2020 և 02.04.2020 թվականների ծանուցումներում նման հանգամանքի չի անդրադարձել, այլ նշել է, որ բացակայել են ապրանքի որակի վերաբերյալ փաստաթղթերը, իսկ այն բանից հետո երբ ներկայացրեցինք ապացույցներ, որ ապրանքի որակի վերաբերյալ ապացույցները էլեկտրոնային փոստով ուղարկվել է Պատվիրատու կազմակերպությանը, ապա նոր և անհիմն փաստարկ մեջբերվեց, որի վերաբերյալ մինչ այս չէր նշվել և որի վերաբերյալ ապացույցներ չեն ներկայացվել: Նման վարքագիծը առավել քան խոսում է իրավունքի չարաշահում թույլ տալու մասին և ակնհայտ խեղաթյուրող և անհիմն փաստարկներ նշելու մասին:

Ինչ վերաբերում է Ընկերության մատակարարած կարագը փորձաքննության ուղարկելուն, Պատվիրատու կազմակերպությունը սույն ընթացակարգի շրջանակում իր 05.05.2020 թվականին ներկայացրած գրությամբ հայտնել է, որ կողմերի միջև առկա

պայմանագրում և հավելվածում հստակ նշված է, որ մինչև 4 անգամ կարող են փորձանմուշ ուղարկել փարձաքննության: Նշված հանգամանքը մեր կողմից չի հերքվել և Ընկերության ներկայացուցչի մասնակցությունը այդ մասին չէր, այլ խնդիրը վերաբերում էր նմուշառության կարգի խախտմանը, այո՛, Պատվիրատու կազմակերպությունը կարող էր մատակարարված կարագը ուղարկել փորձաքննության, սակայն նմուշառությունը պետք է կատարվեր սահմանված կարգով, որով կփաստվեր փորձաքննության ուղարկված ապրանքի վերաբերյալ տեղեկատվությունը: Ավելին ի ապացույց իր գործողությունների Պատվիրատու կազմակերպությունը սույն ընթացակարգի շրջանակում իր 05.05.2020 թվականին ներկայացրած գրությանը կից ուղարկել է լուսանկարներ, իբր որպես ապացույց, որ հենց այդ արկղերից է կատարվել նմուշառումը, որը բնականաբար առնվազն անհիմն է, քանզի բաց արկղը դեռ չի նշանակում, որ հենց այդ նույն արկղից են վերցվել նմուշները և ուղարկվել փորձաքննության: Ավելին սույն ընթացակարգի շրջանակում հրավիրված նիստի ընթացքում Պատվիրատու կազմակերպության ներկայացուցիչը հայտնեց, որ մատակարարված կարագի արկղերը կնքվել են Ընկերության ներկայացուցչի ներկայությամբ, իսկ առկա լուսանկարներից ակնհայտ է, որ արկղերը կնքված չեն, բացի այդ նշում են, որ պարտադիր չէր նմուշառության ժամանակ Ընկերության ներկայացուցչի մասնակցությունը այն էլ այն դեպքում, երբ ինչպես մեր պնդումից և փորձաքննության եզրակացության ուսումնասիրումից ակնհայտ էր, որ որպես նմուշ վերցվել է 280 գրամ կարագ, նոր միայն Պատվիրատու կազմակերպությունը ընդունեց, որ այո այդ արկղերը բացվել և իբր հենց այդ արկղներից են վերցվել նմուշները, որի վերաբերյալ ապացույց առկա չէ սույն գործում: Կրկին հենց իրենց գրությամբ, լուսանկարներով և իրար հակասող դիրքորոշումներով փաստվեց, որ Պատվիրատու կազմակերպության կողմից չի կնքվել մատակարարված կարագի արկղերը, նմուշառությունը չի կատարվել Ընկերության ներկայացուցիչների մասնակցությամբ, և մատակարարված կարագի արկղերը բացված են և առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ նմուշառումը կատարվել է հենց այդ արկղերից՝ իհարկե ունենալով փորձաքննության ուղարկելու իրավունք:

Կրկին ստիպված պետք է անդրադառնամ նաև այն հանգամանքին, որ 11.03.2020 թվականին մատակարարված ապրանքների խախտում չի արձանագրվել սույն ընթացակարգի նախաձեռնման հիմք հանդիսացող գրությամբ, ինչպես նշված ապրանքների ցանկը չի համապատասխանում 11.03.2020 թվականի գնման հայտի ցուցակին, այնպես էլ ենթադրյալ խախտման վերաբերյալ ծանուցման մեջ նշված չէ

11.03.2020 թվականին ներկայացված գնման հայտով մատակարարված ապրանքների խախտման վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը գտնում եմ, որ կրկին փաստվում է Ընկերության կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների ենթադրյալ խախտման վերաբերյալ ապացույցների բացակայությունը, ուստի նման փաստերի բացակայության հիմքով առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր»:

Ընկերությունը, ամփոփելով ներկայացված դիրքորոշումները, խնդրել է մերժել «Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի՝ «Գալիմա» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ ընթացակարգը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/89 ընթացակարգի շրջանակներում 29.04.2020թ. ժամը 12:00-ին և 06.05.2020թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 29.04.2020թ. ժամը 12:00-ին հրավիրված նիստին տնօրենը ապահովել է իր և ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են վերոհիշյալ գրություններով ներկայացված դիրքորոշումը:

3. <u>«Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.04.2020թ. թիվ 108 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ որպես վերադաս պատվիրատուի և «Գալիմա» ՍՊԸ-ի միջև «Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման նպատակով 2019 թվականի դեկտեմբերի 30-ին կնքվել է ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ20/3-Ս-ՏԻ-5-Գ պայմանագիրը (հետայսու նաև՝ Պայմանագիր): 2020 թվականի հունվարի 8-ին կողմերի միջև 30.12.2019թ. կնքվել է Պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին թիվ 1 համաձայնագիրը, որի 1.1 կետով պատվիրատուի իրավունքների և պարտականությունների իրականացումը վերապահվել է «Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին:

«Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից Ընկերությանը 11.03.2020թ. ներկայացվել է գնման հայտ, հայտում նշված ապրանքատեսակներն ու քանակը մատակարարելու նպատակով, որը սակայն մատակարար Ընկերությունը սահմանված ժամկետում չի մատակարարել: Պատվիրատուի կողմից 2020 թվականի մարտի 20-ին էլեկտրոնային փոստի միջոցով Ընկերությանը ներկայացված ծանուցմամբ սահմանվել էր ապրանքների մատակարարման և փաստաթղթերի շտկման վերջնաժամկետ՝ մինչև 2020 թվականի մարտի 26-ը, սակայն մինչև Պայմանագրի լուծման օրը Ընկերությունը չի մատակարարել 11.03.2020թ. գնման հայտով պահանջվող հավի միսը, պանիրը, հյութը մրգերի և դրանց վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

2020 թվականի մարտի 25-ին Ընկերության կողմից մատակարարվել է կարագ, որը «Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից 26.03.2020թ. ուղարկվել է «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ՝ փորձաքննության, այն պատճառաբանությամբ, որ մատակարարված ապրանքը, արտաքին տեսքի զննությամբ չէր համապատասխանում Պայմանագրի տեխնիկական բնութագրով ներկայացված պահանջներին:

«Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ-ի կողմից 02.04.2020թ. տրվել է փորձաքննության արձանագրությունը, համաձայն որի՝ փորձաքննության ներկայացված ապրանքը չի համապատասխանում տեխնիկական բնութագրով սահմանված կարագի բնութագրին և անվանմանը:

Վերոհիշյալ հանգամանքներով պայմանավորված՝ կազմվել են բացասական եզրակացություն և արձանագրություն և «Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից միակողմանի Պայմանագրի 2.1.7 կետի և 2.1.7.1 կետի բ) պարբերության հիմքով 02.04.2020թ. լուծվել է մատակարար Ընկերության հետ կնքված Պայմանագիրը, որի վերաբերյալ ծանուցումը նույն օրը ուղարկվել է Ընկերությանը և անմիջապես հրապարակվել է պաշտոնական կայքում:

Մատակարար Ընկերության բանկ է ներկայացվել վճարման պահանջագիրը՝ պայմանագրի գնի 10 տոկոսի չափով տուգանքը պահանջագրում նշված գանձապետական հաշվեհամարին փոխանցելու նպատակով»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն խնդրել է ձեռնարկել Օրենքով նախատեսված միջոցներ՝ «Գալիմա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու նպատակով:

Պատվիրատուն ՍՑ-ՆԳ-2020/89 ընթացակարգի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«30.12.2019 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Գալիմա» ՍՊԸ-ի մինչև կնքվել է N ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/3-Ս-ՏԻ-5-Գ պայմանագիրը՝ Կազմակերպության կարիքների համար սննդամթերքի մատակարարման նպատակով: 10.01.2020 թվականին Կազմակերպության և Ընկերության միջև կնքվել է պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին թիվ 1 համաձայնագիրը՝ որով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ որպես պատվիրատու, իրավունքներն ու պարտականությունները անցել է Կազմակերպությանը:

Կազմակերպությունը 02.04.2020 թվականին միակողմանի լուծել է Պայմանագիրը՝ Ընկերության կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու, ինչպես նաև ոչ պատշաճ կատարելու հիմնավորմամբ (կից ծանուցում՝ 1):

Մասնավորապես՝ Կազմակերպությունը 11.03.2020 թվականին ներկայացրել է գնման հայտ, ըստ որի Ընկերությունը հայտում նշված ապրանքները ըստ նշված չափաքանակների պետք է 13.03.2020 թվականին մատակարարեր կազմակերպությանը: Ապրանքը մատակարարվել է 17.03.2020 թվականին, սակայն չի ընդունվել, քանի որ առաքչի մոտ բացակայել է սանիտարական գրքույկը: Նշված հանգամանքի կապակցությամբ Կազմակերպությունը 17.03.2020 թվականին ծանուցել է Ընկերությանը և մինչև 20.03.2020 թվականը ժամանակ է տվել՝ թերությունները վերացնելու և ապրանքը Կազմակերպություն մատակարարելու նպատակով (կից գնման հայտ՝ 1, ծանուցում՝ 2):

20.03.2020 թվականին Ընկերությունը մատակարարել է 11.03.2020 թվականի գնման հայտով պահանջված ապրանքը, սակայն մատակարարված ապրանքատեսակներից պանիրը չի ընդունվել, քանի որ Ընկերությունը Կազմակերպության էլ.փոստի հասցեին ուղարկել է Անի և Թամարա ընկերություններին վերաբերող որակի սերտեֆիկատ, սակայն փաստացի մատակարարել է Ամասիայի կաթնամթերքի գործարանի արտադրության պանիր: Հավի միս ապրանքը չի ընդունվել, քանի որ առաքված ապրանքը եղել է բելառուսական արտադրության առանց հայերեն մակնշմամբ և բացակայել է արտադրողի կողմից տրված որակի սերտեֆիկատը, ինչը հակասում է ինչպես Պայմանագրի պահանջներին, այնպես էլ ՀՀ ՍԱՊԾ կողմից ներկայացվող պահանջներին: Թխվածքաբլիթ ապրանքատեսակը չի ընդունվել, քանի որ պիտանելիության ժամկետը պակաս է եղել 60% -ից: Նշված թերությունների վերաբերյալ 20.03.2020 թվականին կազմվել և Ընկերությանն է ուղարկվել ծանուցում և մինչև 26.03.2020 թվականը տրվել է ժամանակ՝ թերությունները վերացնելու և ապրանքը

պատշաճ կերպով ներկայացնելու վերաբերյալ (կից ներկայացված որակի սերտեֆիկատ՝ 1, գնման հայտ՝ 2 և ծանուցում՝ 3):

Բացի այդ, Կազմակերպությունը 20.03.2020 թվականին կազմել և ընկերությանն է ներկայացրել գնման հայտ, որում նշված ապրանքներն Ընկերությունը պետք է մատակարարեր 24.03.2020 թվականին: Ընկերությունը նշված հայտով պահանջված ապրանքները մատակարարել է 23.03.2020 թվականին: Հարկ եմ համարում նշել, որ Ընկերությունը 23.03.2020 թվականին չի մատակարարել 20.03.2020 թվականի գնման հայտով պահանջվող 30կգ կարագը, ինչպես նաև 11.03.2020 թվականի գնման հայտով պահանջված պանիր և հավի միս ապրանքները: 11.03.2020 թվականի գնման հայտով չմատակարարված ապրանքներից մատակարարել է միայն թխվածքաբլիթը:

Այնուամենայնիվ Կազմակերպությունը, շարունակելով վստահել Ընկերությանը, 24.03.2020 թվականին ևս գնման հայտ է ներկայացրել, համաձայն որի պահանջվող ապրանքներն Ընկերությունը պետք է մատակարարեր 27.03.2020 թվականին: Պահանջվող ապրանքները մատակարարվել է 25.03.2020 թվականին, սակայն 11.03.2020 և 24.03.2020 թվականի գնման հայտերով պահանջվող պանիրը, հավի միսը և հյութ մրգերի ապրանքները չեն մատակարարվել: 25.03.2020 թվականին մատակարարված կարագի արտաքին տեսքի ուսումնասիրության արդյունքում Կազմակերպության մոտ կասկածներ են առաջացել կարագի՝ Պայմանագրով պահանջվող տեխնիկական բնութագրին համապատասխանելու վերաբերյալ: Նշված ապրանքի արկղերը կնքվել են և կատարվել է գրառում՝ ապրանքը չօգտագործելու և փորձաքննության ուղարկելու վերաբերյալ (լուսանկարները կցվում են): Նշված հանգամանքի վերաբերյալ անմիջապես տեղեկացվել է մատակարարը: Ընկերության կողմից մատակարարված կարագից 0.28կգ-ն 26.03.2020 թվականին ուղարկվել է «ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ փորձաքննության: 02.04.2020 թվականին փորձաքննություն իրականացնող Ընկերության կողմից Կազմակերպությունը ստացել է թիվ 697 փորձարկման արձանագրությունը, համաձայն որի մատակարարված կարագը չի համապատասանել տեխնիկական բնութագրի պահանջներին:

Հարկ է նշել, որ Կազմակերպության կողմից 11.03.2020 և 24.03.2020 թվականների գնման հայտով պահանջվող պանիր և հավի միս ապրանքները փորձել է մատակարարել 02.04.2020 թվականին, սակայն մատակարարված ապրանքը չի ընդունվել, իսկ մատակարարված կարագը ետ է վերադարձվել՝ հիմք ընդունելով «ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ-ի կողմից տրված արձանագրությունը: Կարագը վերադարձվել է

մատակարարին, ինչի վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմվել է բացասական եզրակացություն, որի ներքևի հատվածում մատակարարը գրել է, որ 25.03.2020 թվականին մատակարարված 60 կգ. –ից 59.720 կգ կարագը ետ վերադարձվեց «Գալիմա» ՍՊԸ-ին և ստորագրել է:

Վերոհիշյալ հանգամանքներից ելնելով, Կազմակերպությունը 02.04.2020 թվականին միակողմանի լուծել է Պայմանագիրը, ինչի մասին ծանուցումը նույն օրը հրապարակել է «gnumner.am» էլ.կայքում:

Ինչ վերաբերում է Ընկերության այն դիրքորոշմանը, որ Կազմակերպությունը կարագը փորձաքննության ուղարկելուց պարտադիր պետք է ապահովեր Ընկերության ներկայացուցչի ներկայությունը, ապա հարկ եմ համարում նշել, որ ինչպես Պայմանագրի, այնպես էլ Պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրի թիվ 1 հավելվածում հստակ նշված է, որ Պատվիրատուի հայեցողությամբ պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածում ցանկացած մատակարարված խմբաքանակից փորձանմուշ կարող է մինչև 4 անգամ ուղարկվել փորձաքննության, որը կիրականացվի պատվիրատուի նախընտրած փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից: Իրականացված փորձաքննության դիմաց վճարումներն իրականացվում են մատակարարի կողմից: Հետևաբար մատակարարված ապրանքը փարձաքննության ուղարկելը պատվիրատու Կազմակերպության իրավունքն է»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/89 ընթացակարգի շրջանակներում 29.04.2020թ. ժամը 12:00-ին և 06.05.2020թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 29.04.2020թ. ժամը 12:00-ին հրավիրված նիստին, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/89 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/89 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Գալիմա» ՍՊԸ-ի միջև 30.12.2019թ. կնքվել է ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/3-Ս-ՏԻ-5-Գ ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագիր, որի համաձայն՝ «Գալիմա» ՍՊԸ-ն

պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի 8-րդ կետի 8.1 ենթակետով սահմանվել է, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 104-րդ կետի պահանջներին համապատասխան Պայմանագրով սահմանված ***Գնորդի իրավունքների և պարտականությունների իրականացումը վերապահվում է «Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին***:

3.Պայմանագրի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց և համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ առաջին մատակարարումը՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, հաջորդ մատակարարումները Պատվիրատուի հայտի հիման վրա՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4.Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 10.01.2020թ. կնքվել է N 1 համաձայնագիրը (հետայսու նաև՝ Համաձայնագիր)՝ 30.12.2019թ. կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/3-Ս-ՏԻ-5-Գ ծածկագրով՝ սննդամթերքի մատակարարման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին, որի համաձայն՝ Պայմանագրի Հավելված 1-ը և Հավելված 2-ը շարադրվել են նոր խմբագրությամբ:

5.Համաձայնագրի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքների մատակարարման ժամկետ սահմանված չէ:

6. Համաձայնագրի 2-րդ կետի 2.1 ենթակետով սահմանվել է, որ Համաձայնագիրն ուժի մեջ մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:

7.«Գալիմա» ՍՊԸ-ին ուղղված 02.04.2020թ. N 90 գրությամբ «Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ հիմք ընդունելով 2019 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/3-Ս-ՏԻ-5-Գ պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի բ) պարբերությունը՝ միակողմանի լուծում է Պայմանագիրը:

8. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 02.04.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.04.2020թ. թիվ 26/26-1/5670-2020 գրությունը, «Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի 13.04.2020թ. թիվ 108 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Գալիմա» ՍՊԸ-ի գրությունները՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Գալիմա» ՍՊԸ-ի միջև 30.12.2019թ. կնքվել է ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/3-Ս-ՏԻ-5-Գ ծածկագրով՝ սննդամթերքի մատակարարման պայմանագիր, որի համաձայն՝ «Գալիմա» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 8-րդ կետի 8.1 ենթակետով սահմանվել է, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 104-րդ կետի պահանջներին համապատասխան Պայմանագրով սահմանված ***Գնորդի իրավունքների և պարտականությունների իրականացումը վերապահվում է «Երևանի N 1 փուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին***:

Պայմանագրի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց և համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ առաջին մատակարարումը՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, հաջորդ մատակարարումները Պատվիրատուի հայտի հիման վրա՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 10.01.2020թ. կնքվել է N 1 համաձայնագիրը՝ 30.12.2019թ. կնված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/3-Ս-ՏԻ-5-Գ

ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին, որի համաձայն՝ Պայմանագրի Հավելված 1-ը և Հավելված 2-ը շարադրվել են նոր խմբագրությամբ:

Համաձայնագրի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքների մատակարարման ժամկետ սահմանված չէ:

Համաձայնագրի 2-րդ կետի 2.1 ենթակետով սահմանվել է, որ Համաձայնագիրն ուժի մեջ մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:

«Գալիմա» ՍՊԸ-ին ուղղված 02.04.2020թ. N 90 գրությամբ «Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ 2020 թվականի մարտի 20-ին էլեկտրոնային փոստի միջոցով Ընկերությանն ուղղված ծանուցմամբ սահմանվել էր ապրանքների մատակարարման և փաստաթղթերի շտկման վերջնաժամկետ՝ մինչև 2020 թվականի մարտի 26-ը, սակայն մինչ օրս (02.04.2020թ.) «Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին Ընկերությունը չի մատակարարել 11.03.2020թ. գնման հայտով պահանջվող հավի միսը, պանիրը և դրանց վերաբերվող անհրաժեշտ փաստաթղթերը:

Ամփոփելով՝ «Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով 2019 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/3-Ս-ՏԻ-5-Գ պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի բ) պարբերությունը՝ միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 02.04.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***<u>5 օրացուցային օրից ավելի:</u>***

Այսպիսով՝ Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 10.01.2020թ. կնքվել է N 1 համաձայնագիրը՝ 30.12.2019թ. կնված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/3-Ս-ՏԻ-5-Գ ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին, որի համաձայն՝ Պայմանագրի Հավելված 1-ը՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը և Հավելված 2-ը՝ վճարման ժամանակացույցը, շարադրվել են նոր խմբագրությամբ:

Պայմանագրի 8-րդ կետի 8.5-րդ ենթակետի համաձայն՝ Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արձանագրում եմ, որ Պայմանագրի Հավելված 1-ը՝ Տեխնիկական բնութագիր -գնման ժամանակացույցը, համաձայն Կողմերի միջև 10.01.2020թ. կնքված N 1 համաձայնագրի, շարադրվել է նոր խմբագրությամբ և Համաձայնագրի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքների մատակարարման ժամկետ սահմանված չէ:

Ընդ որում՝ Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև N 1 համաձայնագիրը կնքվել է ***<u>10.01.2020թ.-ին</u>***, որը Համաձայնագրի 2-րդ կետի 2.1 ենթակետի համաձայն՝ ուժի մեջ է մտել և Կողմերի համար պարտադիր է դարձել կնքման պահից:

Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերության պահանջը, միակողմանի լուծել է Պայմանագիրը, սակայն արձանագրում եմ, որ Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերությունը սահմանում է, որ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի, մինչդեռ գտնում եմ, որ Համաձայնագրի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքների մատակարարման ժամկետ սահմանված չլինելու պայմաններում Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի բ) պարբերությամբ նախատեսված 5 օրացուցային օրից ավելի խախտման փաստը չէր կարող վրա հասնել: Ուստի գտնում եմ, որ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Գալիմա» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի բ)

պարբերությամբ նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետի խախտման փաստը:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում եմ, որ հնարավոր չէ արձանագրել «Գալիմա» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրային պարտավորության խախտման փաստը, քանի որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու բավարար հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.04.2020թ. թիվ 26/26-1/5670-2020 գրությամբ «Գալիմա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**